ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5719-Ա «24» նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.59 ՇԵՆՔ Հ.9 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՍԵՓ ՄԱՐԼԵՆԻ ՍՄԲԱՏՅԱՆԻ, ՄԱՌԼԵՆ ՀՈՎՍԵՓԻ ՍՄԲԱՏՅԱՆԻ ԵՎ ՆԱԶԵՆԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ և 28-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 09.11.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով «Ա.Ռ.Մ.ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 09.04.2021թ. տրված հ.86/21 տեխնիկական դրական եզրակացությունը, բաժնային սեփականատերերի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեի 21/01/2021թ. հ.ԱՏ-21012021-01-0775 տեղեկանքը, բաժնային սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, «ԿԱՆՈՆ ԱՐԵԱ» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ. տրված շինությունների բնութագիրը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձանց դիմումները (29.01.2021թ. հ.Ս-9519, 27.04.2021թ. հ.Ս-12410, 01.04.2022թ. հ.Դ-249-22, 10.05.2022թ. հ.Դ-17507-22, 24.06.2022թ. հ.Դ-39825-22, 05.09.2023թ. հ.Դ-109415-23, 29.10.2026թ. հ.Դ-118866-26).

1.Երևան, Կենտրոն, Տերյան փողոց հ.59 շենք հ.9 բնակարան հասցեում՝ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22032021-01-0248 վկայական) քաղաքացիներ Հովսեփ Մարլենի Սմբատյանի, Մառլեն Հովսեփի Սմբատյանի և Նազենի Սերյոժայի Պետրոսյանի կողմից ինքնակամ իրականացրած 115,48քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի /ձեղնահարկ՝ 107,66քառ.մետր, աստիճան՝ 7,82քառ.մետր), ինքնակամ բացված միջհարկային բացվածքը՝ 1 /մեկ/ հատ ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 2319600 (երկու միլիոն երեք հարյուր տասնինը հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ